# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/2

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆ

# ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Սոնա Ադամյանը, Արթուր Գրիգորյանը, Շահեն Մինասյանը, Մարյամ Միքաելյանը, Արեվիկ Ստեփանյանը, Անժելա Վանեսյանը

**<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար Բագրատ Զաքարյանը</u>**

**<u>Նիստը արձանագրում էր Աննա նավասարդյանը</u>**

**ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/***

**ՈՐՈՇԵՑ** - Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 28-ի չորրորդ նստաշրջանի N2 արտահերթ նիստի օրակարգը՝

1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-ծրագիր 4-ի Քաջարան-Ագարակ հատվածի շրջանակներում հանրության գերակա շահերի ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետությանը օտարելու մասին

2)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող օրինական ճանաչված կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Լենիչկա Սիմոնի Հակոբյանին օտարելու մասին

3)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող օրինական ճանաչված կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Մկրտիչ Ռազմիկի Ստեփանյանին օտարելու մասին

4)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող օրինական ճանաչված կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Մուրազիկ Ծովակի Խաչատրյանին օտարելու մասին

5)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող օրինական ճանաչված կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Վերժիկ Անուշավանի Գասպարյանին օտարելու մասին

6) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 142-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

**Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0**

**Որոշումն ընդունված է /Որոշում N 14-Ա/**

**ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ 4-Ի ՔԱՋԱՐԱՆ-ԱԳԱՐԱԿ ՀԱՏՎԱԾԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/***

**ՈՐՈՇԵՑ** - 1.Տալ համաձայնություն Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, հանրության գերակա շահի ճանաչված հողամասերը առաջարկված փոխհատուցման գումարներով օտարելու Հայաստանի Հանրապետությանը՝ համաձայն հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառու յթների իրականացումը:

**Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0**

**Որոշումն ընդունված է /Որոշում N 15-Ա/**

**ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ** ***ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ԼԵՆԻՉԿԱ ՍԻՄՈՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/***

**ՈՐՈՇԵՑ** - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Մեղրի համայնք Մեղրի քաղաք Մ. Օհանջանյան փողոց 97/1 հասցեում գտնվող 26,6 քմ արտաքին մակերեսով շինությունը /ավտոտնակը / և նրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,00266 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0014-0095, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 20022023-09-0048 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով օտարել Լենիչկա Սիմոնի Հակոբյանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի սահմանված գներով.
1) Ավտոտնակի համար՝ 10 000 դրամ x 0,1209 x 26,6 քմ = 32160 /երեսուներկու հազար հարյուր վաթսուն / ՀՀ դրամ,
2) Պահպանման և սպասարկման համար ամրակայած հողատարածքի համար 1221 դրամ x 26,6 քմ =32479 / երեսուներկու հազար չորս հարյուր յոթանասունինը/ ՀՀ դրամ:
3) Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 կետի վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 23 000 (քսաներեք հազար) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա):
2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

**Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0**

**Որոշումն ընդունված է /Որոշում N 16-Ա/**

**ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ՄԿՐՏԻՉ ՌԱԶՄԻԿԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/***

**ՈՐՈՇԵՑ** - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Մեղրի համայնք Մեղրի քաղաք Զորավար Անդրանիկի փողոց 28/55 հասցեում գտնվող 13,34 քմ արտաքին մակերեսով երկհարկանի շինությունը / արհեստանոցը և օժանդակ շինությունը / և նրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,00067 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0065-0085, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 17022023-09-0034 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով օտարել Մկրտիչ Ռազմիկի Ստեփանյանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի սահմանված գներով.

1) Երկհարկանի շինության համար՝ 90 000 դրամ x 0,1422 x 13,34 քմ = 170726 / մեկ հարյուր յոթանասուն հազար յոթ հարյուր քսանվեց / ՀՀ դրամ,

2) Պահպանման և սպասարկման համար ամրակցված հողատարածքի համար ՝ 1877,7 դրամ x 6,7քմ =12581 / տասներկու հազար հինգ հարյուր ութսունմեկ / ՀՀ դրամ:

3) Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 կետի վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 33 000 (երեսուներեք հազար) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա):

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

**Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0**

**Որոշումն ընդունված է /Որոշում N 17-Ա/**

**ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ՄՈՒՐԱԶԻԿ ԾՈՎԱԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/***

**ՈՐՈՇԵՑ** - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Մեղրի համայնք Մեղրի քաղաք Զորավար Անդրանիկի փողոց 28/24 հասցեում գտնվող 45,4 քմ արտաքին մակերեսով երկհարկանի շինությունը /ավտոտնակը և ծածկը/ և նրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,00227 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0065-0087, անշարժ գույքի նկատմամբ

իրավունքների պետական գրանցման N 10022023-09-0088 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով օտարել Մուրազիկ Ծովակի Խաչատրյանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի սահմանված գներով.

1) Երկհարկանի շինության համար՝ 10 000 դրամ x 0,1422 x 45,4 քմ = 64559 / վաթսունչորս հազար հինգ հարյուր հիսունինը / ՀՀ դրամ,

2) Պահպանման և սպասարկման համար ամրակցված հողատարածքի համար ՝ 1877,7 դրամ x 22,7 քմ =42624 / քառասուներկու հազար վեց հարյուր քսանչորս/ ՀՀ դրամ:

3) Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 կետի վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 23 000 (քսաներեք հազար) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա):

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

**Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0**

**Որոշումն ընդունված է /Որոշում N 18-Ա/**

**ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ՎԵՐԺԻԿ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/***

**ՈՐՈՇԵՑ** - 1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Մեղրի համայնք Ագարակ քաղաք Գործարանային փողոց 5/2 հասցեում գտնվող 64,9 քմ արտաքին մակերեսով շինությունը /անասնաշենքը/ և նրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,03403 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-002-0070-0035, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 08022023-09-0027 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով օտարել Վերժիկ Անուշավանի Գասպարյանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի սահմանված գներով.

1) Անասնաշենքի համար՝ 20 000 դրամ x 0,1209 x 64,9 քմ = 156 929 /մեկ հարյուր հիսունվեց հազար ինը հարյուր քսանինը / ՀՀ դրամ :

2) Պահպանման և սպասարկման համար ամրակայած հողատարածքի համար ՝ 1221 դրամ x 340,3 քմ =415 507 / չորս հարյուր տասնհինգ հազար հինգ հարյուր յոթ/ ՀՀ դրամ:

3) Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 կետի վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 23 000 (քսաներեք հազար) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա):

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

**Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0**

**Որոշումն ընդունված է /Որոշում N 19-Ա/**

**ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 142-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***/Զեկ. ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ/***

**ՈՐՈՇԵՑ** - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի՝ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու և անհատույց սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետությանը հողամասեր օտարելու մասին» N142-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ 2-րդ կետում «0,1721» թիվը փոխարինել «0,44» թվով:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

**Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0**

**Որոշումն ընդունված է /Որոշում N 20-Ա/**

**Ավագանու անդամներ**

ԱՆԱՀԻՏ ԱՂԱՄԱԼՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԱՐՏՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ

ԱՐԱՐԱՏ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՄԱՐՈՒՍՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՏՈՒՇ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՆԱՐԵԿ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Ա.Նավասարդյանը